

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### 1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Կարեն Հովսեփյան

### 2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի գլխավոր մասնագետ

### 3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Ճապոնիա, քաղաք Կիտակյուսու, 2023թ. սեպտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 27-ը

### 4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (JICA)

### 5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն 2023թ. սեպտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 24-ը Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից կազմակերպված «էներգաարդյունավետության և էներգախնայողության խթանում» գիտելիքի համատեղ ստեղծման ծրագրի վերապատրաստման դասընթացին:

### 6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Իմ կողմից զեկույցի տեսքով ներկայացվել է ՀՀ էներգետիկայի բնագավառի, մասնավորապես՝ վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ոլորտների ընթացիկ վիճակը և զարգացման միտումները:

### 7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Դասընթացի ընթացքում դասախոսություններ են կարդացել տեղի և հրավիրված դասախոսները: Ներկայացվել է էներգետիկայի բնագավառում ճապոնական օրենսդրությունը, վերոնշյալ մասնագիտական հարցերին առնչվող այլ թեմաներ:

Կազմակերպվել է այցելություն Կիտակյուսու քաղաքի «Eco city» հատվածը, որտեղ ցուցադրվել են վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության և էներգախնայողության ոլորտների ճապոնական առաջավոր փորձը, մասնավորապես՝ ասիամերձ ջրային տարածքներում հողմակայանների տեղակայումը, էներգաարդյունավետ և էներգախնայող միջոցառումների կիրառությունը գրասենյակային տարածքներում, արտադրության մեջ և այլն:

Կազմակերպվել են նաև այցեր այլ ընկերություններ, մասնավորապես՝ Panasonic, TLV, Azbil, Daikin և այլն:

### 8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Դասընթացի ավարտին կազմակերպիչների կողմից շեշտվել է կարևորությունը ապահովելու սույն ծրագրի շարունակականությունը: Մասնակիցներից պահանջվել է դասընթացի ընթացքում ստացած գիտելիքների հիման վրա պատրաստել «Գործողությունների Պլան»:

Վերապատրաստման դասընթացի ավարտին տրվել է վկայական (կցվում է):

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իմ կողմից պատրաստված «Գործողությունների Պլան»-ում առաջարկվել է ներդնել Zero Energy House (Զրոյական էներգետիկ տան) փորձարարական ծրագիրը Հայաստանում: Ճապոնական կողմի հավանության դեպքում հնարավոր կլինի անդրադառնալ վերոնշյալ փորձարարական ծրագրի հետագա ընթացքին:

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության  
վերականգնվող էներգետիկայի բաժնի  
գլխավոր մասնագետ

Կարեն Հովսեփյան